

5.5. Անտառային տնտեսությունը և անտառտնտեսական աշխատանքները 2000 թվականին

2000թ. ՀՀ անտառային ֆոնդը կազմել է 450.3 հազ. հա, որի մոտ 71.3%-ը ծածկված է անտառներով: Անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել 1041.9 հա-ի վրա 1999թ. 750.2 հա-ի դիմաց, որից անտառի տնկում և ցանքս՝ 421.9 հա-ի վրա (1999թ. 360.2 հա-ի դիմաց), ընդ որում՝ անտառտնկում պետական նշանակության անտառներում՝ 321.9 հա-ի վրա, արագաճ բարդու արտադրական տնկադաշտերի հիմնադրում և խնամք՝ 25 հա-ի վրա, ցածրարժեք և ցածր լրիվության տնկարկների վերականգնում՝ 5 հա-ի վրա:

Անտառի բնական վերաճին օժանդակող միջոցառումներ են կատարվել 525 հա-ի վրա. մատղաշի պահպանում՝ 92 հա-ի վրա, ցանկապատվել է 3 հա անտառային տարածք, իսկ 430 հա-ի վրա իրականացվել է անտառային հողերի հանքայնացում: Անտառկուլտուրաների լրացում և անտառպուրակի խնամք կատարվել է համապատասխանաբար 499.6 և 468 հա-ի վրա: Բնափայտային և թփուտային տեսակների ցանքս է կատարվել 6.7 հա տնկարկներում, անտառ-կուլտուրաների խնամք՝ 3518.9 հա-ի վրա, ծառատեսակների, թփերի պտղային և հատապտղային տեսակների սերմնաբույսերի հիմնում դպրոցներում՝ 3.6 հա-ի վրա, հող է նախապատրաստված անտառ-կուլտուրաների, տնկարկների, տնկադաշտերի և դպրոցների ստեղծման համար՝ 427.2 հա-ի վրա:

2000թ. մթերվել է 12.9 տ սերմ, որի 99.4%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին (կաղնի՝ 4.5 տ, պտղահնդավորներ՝ 0.9 տ, ընկուզապտղավորներ՝ 1.5 տ), իսկ մնացած 0.6%-ը կամ 78.5 կգ-ը բաժին է ընկել փշատերևավորներին (հիմնականում սոճի՝ 66 կգ): Սերմերի մնացորդը տարեվերջին կազմել է 1.6 տ, որի 96.4%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին:

2000թ. պետական նշանակության անտառներում անտառի շարք է փոխադրվել անտառկուլտուրաներ 126.3 հա-ի վրա: Կատարվել է խոտհունձ 220 հա-ի վրա:

Անտառահատումներ են կատարվել 3198 հա տարածքի վրա (1999թ. 3461 հա-ի դիմաց), որի 70.8%-ը կամ 2264 հա-ն կազմել են սանիտարական հատումները, մնացածը՝ անտառվերականգնման (469 հա), նոսրացման (115 հա), անցումային (248 հա), լուսավորման և մաքրման (102 հա) հատումներն են:

Իրացվել է օգտագործման համար պիտանի 71.8 հազ. խիտ խոր.մ փայտանյութ (1999թ. 41.8 հազ. դիմաց), որի 17.7%-ը կամ 12.7 հազ. խիտ խոր. մ-ը շինափայտ է: Շինափայտի ընդհանուր ծավալի մոտ 50.8%-ը ստացվել է սանիտարական հատումներից:

2000թ. արձանագրվել է անտառային հրդեհների 38 դեպք 45.7 հա տարածքի վրա, 1999թ. համապատասխանաբար 15-ի և 53.1 հա-ի դիմաց: Հրդեհներն ընդգրկել են 26.9 հա անտառածածկ տարածք: Յուրաքանչյուր հրդեհ միջին հաշվով ընդգրկել է 0.7 հա անտառածածկ տարածք (1999թ. 3.5 հա-ի դիմաց): Բոլոր հրդեհների պատճառ են հանդիսացել այլ կազմակերպությունները: Անտառային հրդեհներից անտառտնտեսություններին պատճառված վնասը կազմել է 1.7 մլն. դրամ 1999թ. 0.7 մլն. դրամի դիմաց: Այրված և վնասված է 860.1 հազ. դրամ արժողությամբ անտառ արմատի վրա, 314.2 հազ. դրամ արժողությամբ շենքեր և այլ շինություններ: Անտառվերականգնման աշխատանքների արժեքը կազմել է 62 հազ. դրամ, տարածքի մաքրմանը՝ 38.9 հազ. դրամ, իսկ հրդեհների մարման ծախսերը՝ 388.4 հազ. դրամ: Հրդեհների հետ կապված ակտավորված հետաքննության

նյութերի քանակը կազմել է 36, որոնք հանձնվել են իրավապահ մարմիններին: Հետաքննությանը վճռված տուգանքը կազմել է 208.4 հազ. դրամ, որից փաստացի գանձվել է 20.0 հազ. դրամ:

2000թ. կատարվել է անտառապաթուղոգիական ուսումնասիրություն 1.6 հազ. հա-ի վրա 1999թ. 11 հազ. հա-ի դիմաց: Վերգետնյա պայքարի միջոցառումներ են կատարվել 426 հա-ի վրա 1999թ. 1.0 հազ. հա-ի դիմաց: Չորացած անտառտնկարկների և անտառնշակաբույսերի տարածքը կազմել է 235 հա 1999թ. 50 հա-ի դիմաց, որից ոչնչացվել է 50 հա՝ հիվանդություններից, 185 հա՝ այլ գործոններից (բացառությամբ հրդեհների):

2000թ. անտառի վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին զբաղեցրել են 37.1 հազ. հա, որից 29.7 հազ. հա-ի համար պահանջվել են պայքարի միջոցառումներ, սակայն փաստացի կատարվել են 426 հա-ի վրա: Վնասատուների ու հիվանդությունների օջախները տարեվերջին կազմել են 29.2 հազ. հա (1999թ.՝ 35.5 հազ. հա):

2000թ. տերևակեր վնասատուներով ընդգրկված անտառտարածքները տարեսկզբին կազմել են 24.7 հազ. հա: Այս անտառտարածքներում պայքարի միջոցառումներ չեն կատարվել: Կրծողներով ընդգրկված տարածքը տարեսկզբին կազմել է 10.1 հազ. հա, որի 39.4%-ը կարիք ունի պայքարի միջոցառումների: Տարեվերջին կրծողներով ընդգրկված տարածքը կազմել է 3.6 հազ. հա, որը ամբողջությամբ պահանջում է պայքարի միջոցառումներ: Անտառի հիվանդությունների օջախները տարեսկզբին կազմել են 1770 հա, (1999թ.՝ 1650 հա), որի 39.5%-ը պայքարի միջոցառումներ պահանջող անտառտարածքներն են:

Հաշվետու տարում իրականացված անտառտնտեսական աշխատանքների ծավալը կազմել է 514.0 մլն. դրամ 1999թ. 341.0 մլն. դրամի դիմաց:

2000թ. կատարվել են 13.4 մլն. դրամի անտառչինարարական աշխատանքներ: Կանաչ գոտիների բարեկարգում կատարվել է 230 հա տարածքի վրա, որի համար ծախսվել է 348.0 հազ. դրամ:

2000թ. արձանագրվել է անտառխախտումների 1974 դեպք 1999թ-ի 2052-ի դիմաց: Վնասի ընդհանուր գումարն, ըստ անտառխախտման ակտերի, կազմել է 24.5 մլն. դրամ, որի 42.5%-ը կան 10.5 մլն. դրամն անտառխախտողների կողմից մինչև 01.01.2001թ. կամավոր մուծվել է: Ընդհանուր անտառխախտումների 35.5%-ի կան 702 դեպքի քննությունը հանձնվել է իրավապահ մարմիններին, որի 0.6%-ի կան 4 դեպքի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել և նշանակվել տույժ: Ըստ անտառխախտման ուղղությունների, վերականգնված ընդհանուր գումարը կազմել է 12.8 մլն. դրամ, որի 2.8%-ը վերականգնվել է ըստ վճիռների:

Արձանագրվել է 1907 ապօրինի անտառհատումներ: Հատվել է 7706 ծառ, հատված փայտանյութը կազմել է 2.7 հազ.խոր.մ: Ապօրինի անտառհատումներից վնասը կազմել է ընդհանուր անտառախախտումներից հասցված վնասի 96.2%-ը կան 23.6 մլն. դրամ: Դրա 43.0%-ը կան 10.1 մլն. դրամը կամավոր մուծվել է ըստ անտառխախտման ակտերի: Ապօրինի անտառհատումների դեպքերը կազմել են իրավապահ մարմիններին հանձնված անտառխախտումների ընդհանուր դեպքերի 94.8%-ը կան 666 դեպք, որոնցից 4-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ և նշանակվել է տույժ: Վերականգնված գումարը կազմել է 12.3 մլն. դրամ կան վճռված ընդհանուր տուժագումարի 52.2%-ը:

Արձանագրվել է անասունների չթույլատրված արածեցման 80 դեպք 1999թ-ի 89-ի դիմաց: Չթույլատրված տարածքում արածեցվել է 716 գլուխ անասուն 1999թ-ի 889-ի դիմաց, վնասի գումարը կազմել է 728.9 հազ. դրամ կան անտառխախտումների ընդհանուր վնասի 2.97%-ը: Իրավապահ մարմիններին հանձնված առաջին 15 դեպքերի առնչությամբ վերականգնված գումարը կազմել է գանձման ենթակա ընդհանուր գումարի 45.0%-ը կան 327.7 հազ. դրամ:

Արձանագրվել է անտառային տարածքի հողազավթման 39 դեպք, զավթված տարածքը կազմել է 2.2 հեկտար, վնասի գումարը՝ 100 հազ. դրամ: Իրավապահ մարմիններին հանձնվել է 18 գործ: Հողազավթողների կողմից 56.8 հազ. դրամ կամավոր մուծվել է:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՈՐՎԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Արձանագրվել է որսի կանոնների խախտումների 14 դեպք: Վնասը կազմել է 93.0 հազ. դրամ, որի 61.8%-ը կամ 57.5 հազ. դրամը կամավոր մուծվել է ըստ անառիսախտումների ակտերի: Իրավապահ մարմիններին է հանձնվել 3 գործ:

**ՀՀ Ազգային վիճակագրական
ծառայության նախագահ**

Ս.Մնացականյան